Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 15-ի N 294 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ - 2011» ՏԱՐԵԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխարհի ավելի քան հարյուր երկրների հայ համայնքներում հասարակական-քաղաքական կազմակերպություններ՝ հոգևոր կառույցներ, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, մշակութային և կրթական կազմակերպություններ, կուսակցություններ, հայագիտական կենտրոններ և ամբիոններ, երիտասարդական, կանանց, մարզական կառույցներ, գրադարաններ, մասնագիտական և հայրենակցական միություններ, ճանաչված սփյուռքահայեր ու անհատ բարեգործներ հսկայածավալ աշխատանքներ են կատարում հայապահպանության համար: Նրանց գործունեությունը կարիք ունի հավուր պատշաճի լուսաբանման և ներկայացման:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ պարբերաբար հրատարակվում է «Հայկական սփյուռք» տարեգիրքը, որի տպագրությունն էապես նպաստում է Հայաստան-սփյուռք կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը: Արդեն հրատարակվել և սփյուռքյան կառույցներին է տրամադրվել «Հայկական սփյուռք-2009» և «Հայկական սփյուռք-2010» տարեգրքերը:

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Մինչև 2009 թվականը «Հայկական սփյուռք» տարեգրքի նման ձևաչափով հրատարակություն չի իրականացվել: Առկա հրատարակությունները հայ համայնքների, համահայկական կազմակերպությունների, հոգևոր և այլ կառույցների իրականացրած ծրագրերի,

հայապահպան ձեռնարկների և հիշարժան իրադարձությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն չէին պարունակում: Նշված կառույցների միջև տեղեկատվության փոխանակման, համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ առկա էին որոշակի դժվարություններ: Անհրաժեշտ է էական քայլեր իրականացնել սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4. Ակնկալվող արդյունքներն են՝

1) սփյուռք-սփյուռք և հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդումը, աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունների ընդլայնումն ու միջհամայնքային կապերի սերտացումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում սփյուռքի հետ իրականացված ծրագրերը, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկներն աշխարհասփյուռ հայությանը հասանելի դարձնելը.

3) հայրենիքում կամ նրա սահմաններից դուրս բնակվող յուրաքանչյուր հայի կամ կազմակերպությանը Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության իրականացմանը մասնակից դարձնելը:

5. «Հայկական սփյուռք» տարեգիրքը նախատեսվում է հրատարակել արևելահայերեն-ռուսերեն, արևելահայերեն՝ դասական ուղղագրությամբ-անգլերեն տարբերակներով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով մրցութային եղանակով հաղթող ճանաչված կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրականացնի «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակումը:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7. «Հայկական սփյուռք» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) տարեգիրքը նախատեսվում է հրատարակել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ